Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011 թ.
սեպտեմբերի 29-ի նիստի N 38
արձանագրային որոշման

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2012թ. տարեկան ծրագիրը (այսուհետ՝ Տարեկան ծրագիր) մշակվել է “Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 5.1 հոդվածին համապատասխան:

Ծրագիրը կազմելիս հաշվի են առնվել ՀՀ Կառավարության 2005թ. նոյեմբերի 3-ի արձանագրային որոշմամբ հավանության արժանացած “Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2006-2015թթ. ռազմավարության” հիմնական ուղղությունները, ինչպես նաև շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների կողմից ներկայացված առաջարկությունները: Ծրագիրը համահունչ է ՀՀ Կառավարության 2008թ. ապրիլի 28-ի” Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին” N 380-Ա որոշման, “Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին” ՄԱԿ-ի կոնվենցիայի և “Հաշմանդամների իրավունքների և հասարակական կյանքում նրանց լիարժեք մասնակցության խթանման, հաշմանդամների կյանքի որակի բարելավման” 2006-2015 թթ. Եվրոխորհրդի գործողությունների ծրագրի դրույթներին:

Տարեկան ծրագրի հիմնական խնդիրներն են՝

1. հաշմանդամություն ունեցող անձանց համար կենսագործունեության բոլոր ոլորտներում հավասար պայմանների ստեղծմանն ու հավասար հնարավորությունների ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացումը,
2. հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման և սոցիալական պաշտպանության հարցերին առնչվող օրենսդրության կատարելագործումը,
3. հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական, մասնագիտական և սոցիալական վերականգնման համար անհրաժեշտ միջոցառումների ապահովումը,
4. հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի, բժշկական և սոցիալական սպասարկման կազմակերպումը,

հաշմանդամություն ունեցող անձանց կրթության, մասնագիտական ուսուցման կազմակերպումն ու զբաղվածության խթանումը,

5. հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավումը մարզական և մշակութային ծրագրերում,
6. հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող պետական և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնումը,
7. պետության և հասարակության ուշադրության բևեռումը հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների վրա:

ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Հաշմանդամության ոլորտում իրականացվող պետական քաղաքականությունը, հիմնական մոտեցումները և պետական նպատակային ծրագրերը ուղղված են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանն ու հավասար պայմանների և հավասար հնարավորություների ապահովմանը, նրանց սոցիալական ներառմանը:

Շարունակվել են իրականացվել աշխատանքներ 2005թ. նոյեմբերի 3-ին ՀՀ Կառավարության հավանությանն արժանացած "Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2006-2015թթ. ռազմավարության" դրույթների իրականացման ուղղությամբ:

Կազմակերպվել են "Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին" ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների, նրա վավերացման հետ կապված հարցերի, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի լայն քննարկումներ:

Կոնվենցիան վավերացվել է 2010թ. մայիսին և գործունեության մեջ մտել 2010 թվականի հոկտեմբերի 22-ին, ինչը ենթադրում է օրենսդրական բարեփոխումներ, հաշմանդամություն ունեցող անձանց հասարակություն ներառելուն ուղղված նոր քայլեր, գործող ծրագրերի խթանում, հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների լուծման նորովի մոտեցումներ:

Մշակվել է ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների ներառումն ապահովող "Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին" ՀՀ օրենքի նախագիծը, քննարկվել է շահագրգիռ գերատեսչությունների, միջազգային, հասարակական կազմակերպությունների հետ և ներկայացվել Հայաստանի Հանրապետության Կառավարություն:

Նոր օրենքի ընդունումը բխում է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման և նրանց նկատմամբ ամեն տեսակ խտրականության բացառման քաղաքականության մշակման անհրաժեշտությունից: Իրականացվող բոլոր միջոցառումների՝ օրենսդրական և գործնական, վերջնանպատակը պետք է լինի հաշմանդամություն ունեցող անձին հասարակություն ներառելը:

Մշակվել է " Անաշխատունակության կորստի աստիճանի որոշման հիման վրա հաշմանդամության սահմանման մոդելին անցնելու" հայեցակարգի նախագիծը, քննարկվել շահագրգիռ գերատեսչությունների, հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ և ներկայացվել Հայաստանի Հանրապետության Կառավարություն:

Որդեգրելով հաշմանդամության գաղափարախոսության նոր՝ սոցիալական մոդելը, մեր պետությունը փորձում է ստեղծել մի համակարգ, որի հիմքում դրված լինի հաշմանդամություն ունեցող անձի պահպանված աշխատանքային կարողությունների գնահատումը և ըստ այդմ՝ վերականգնողական գործընթացի կազմակերպումը, կենսաթոշակի նշանակումը, ինչպես նաև սոցիալական աջակցության այլ տեսակների որոշումն ու հաշմանդամություն ունեցող անձին ներառումը հասարակություն:

Հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող ծառայություններն ավելի մատչելի դարձնելու նպատակով մշակվել է „ՀՀ Կառավարության 2007թ. ապրիլի 12-ի N 453-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին” ՀՀ Կառավարության որոշման նախագիծը, որն ընդունվել է 2010 թվականի հուլիսի 15-ին ՀՀ Կառավարության թիվ 888-Ն որոշմամբ: Նշված որոշմամբ հստակեցվել է հաշմանդամություն ունեցող անձանց պրոթեզաօրթոպեդիկ, վերականգնողական և տեխնիկական այլ միջոցների տրամադրման հետ կապված հարաբերությունները, բարելավվել վերականգնողական գործընթացը՝ ապահովելով հավասար հնարավորություններ հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Վիճակագրական տվյալների համաձայն՝ 2011թ. հուլիսի 1-ի դրությամբ հանրապետությունում հաշվառված 172445 հաշմանդամություն ունեցող անձանց 68,7 %-ը աշխատանքային տարիքի են, որոնցից զբաղված է միայն 8-9%-ը:

Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության ապահովման խնդիրը շարունակում է մնալ սոցիալական ոլորտի դժվար լուծելի հիմնախնդիրների շարքում: ”Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին” ՀՀ օրենքում հաշմանդամություն ունեցող անձինք ամրագրվել են որպես աշխատաշուկայում անմրցունակ խումբ և, որպես այդպիսիք, նրանց համար սահմանվել են լրացուցիչ երաշխիքներ:

2010թ. ընթացքում մասնագիտական ուսուցման ծրագրում ընդգրկվել է 83 հաշմանդամություն ունեցող անձ, որոնցից 10-ը տեղավորվել են աշխատանքի:

Մասնագիտական ուսուցման և “Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման աջակցության նպատակով աշխատավարձի մասնակի փոխհատուցում գործատուին” ծրագրի արդյունքում աշխատանքի է տեղավորվել 91 հաշմանդամ, 8-ը՝ գրանցվել է որպես անհատ ձեռնարկատեր:

Ընդհանուր առմամբ գործակալության միջոցով աշխատանքի է տեղավորվել 125 հաշմանդամություն ունեցող անձ:

Հաշմանդամություն ունեցող անձինք օգտվում են ”Զբաղվածության պետական ծառայություն” գործակալության կողմից իրականացվող զբաղվածության կարգավորման ծրագրերից, մասնավորապես՝

1. հաշմանդամություն ունեցող անձանց համար իրականացվում է ”Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի ընդունելու դեպքում աշխատավարձի մասնակի փոխհատուցում գործատուին” ծրագիրը /առավելագույն տևողությունը առաջին և երկրորդ խմբի հաշմանդամություն ունեցող անձ համար 2 տարի/,
2. հաշմանդամություն ունեցող անձանց մասնագիտական ուսուցման, աշխատանքային ունակությունների վերականգնման,
3. ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող ֆինանսական աջակցության,
4. հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածությունը խթանելու նպատակով, ոլորտի հասարակական կազմակերպությունների ակտիվ մասնակցությամբ,

կազմակերպվել է աշխատանքի տոնավաճառ հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Վերոնշյալ օրենքի 2010 թվականի փոփոխության արդյունքում՝ զբաղվածության ամենամյա պետական ծրագրում ավելացել են նոր ծրագրեր՝

5. "Աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամություն ունեցող անձանց համար աշխատատեղերի հարմարեցումը գործատուի մոտ"

6. „Մասնագիտություն ունեցող, սակայն աշխատանքային փորձ չունեցող գործազուրկների և աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային պրակտիկայի կազմակերպումը գործատուի մոտ" ծրագրերը, ինչպես նաև՝

7. աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամություն ունեցող անձանց իրավունք է տրվել մասնակցել այլ վայր աշխատանքի գործուղման ծրագրին:

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման ծրագրի աջակցությամբ "Հայաստանի կույրերի միավորում" հ/կ-ի Էջմիածնի ուսումնաարտադրական կազմակերպությունում և Ճամբարակի "Աստղացոլք" հասարակական կազմակերպությունում գործում են փորձնական սոցիալական ձեռնարկություններ:

Սոցիալական ձեռնարկությունների հիմնումը ուղղված է մի կողմից հաշմանդամ անձանց սոցիալական խնդիրների լուծմանն ու նրանց համար հնարավորինս հավասար պայմանների ապահովմանը, մյուս կողմից նրանց աշխատանքային ներուժը հասարակությանը ի շահ ներդնելուն:

Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության գործընթացը խթանելու, համայնքի կյանքում նրանց ներգրավելու նպատակով, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և "Հյուման Դիգնիթի ընդ Փիս" բարեգործական հիմնադրամի միջև 02.07.2010թ. ստորագրված փոխըմբռնման հուշագրի՝ "Հաշմանդամություն ունեցող անձինք Հայաստանում որպես խոստումնալից աշխատուժ" համագործակցության ծրագիրն իրականացվել է Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում և Երևանի Էրեբունի, Նուբարաշեն համայնքներում: Այն հիմնականում ուղղված է հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային կարողությունների գնահատմանը, աշխատատեղերի հարմարեցմանը, հաշմանդամություն ունեցող անձանց համար վերապատրաստման դասընթացների կազմակերպմանը, ինչպես նաև իրազեկման մակարդակի բարձրացմանը:

"Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին", "Կրթության մասին" և "Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին" ՀՀ օրենքները կանոնակարգում են հաշմանդամություն ունեցող անձանց և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց կրթության հարցերը:

2010-2011 թվականներին շարունակվել են աշխատանքները հատուկ կրթության կարիք ունեցող անձանց համար նախատեսված միջոցառումների և ներառական կրթության ընդլայնման և բարելավման ուղղությամբ:

Հանրապետության 32 նախադպրոցական ուսումնական հաստատություններում և 64 հանրակրթական դպրոցներում իրականացվել է ներառական կրթություն: Իրականացվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպում 23 հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունում:

Հաշմանդամ, ծնողազուրկ և սոցիալապես անապահով ընտանիքների շուրջ 400 երեխայի համար գիշերօթիկ և հատուկ դպրոցներում կազմակերպվել է գեղարվեստական կրթություն:

“Ընտանեկան գրադանավար” ծրագրի շրջանակներում տեղաշարժման խնդիրներ ունեցող շուրջ 230 հաշմանդամություն ունեցող անձանց համար տնային պայմաններում կազմակերպվել է գրադարանային սպասարկում:

Ապահովվում է անվճար հիմունքներով կրթությունը միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում, առնվազն անցումային միավոր ստացած հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև ուսման ընթացքում հաշմանդամ դարձած անձանց համար:

Ապահովվում է անվճար հիմունքներով կրթությունը միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում, առնվազն անցումային միավոր ստացած հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև ուսման ընթացքում հաշմանդամ դարձած անձանց համար:

Տարեցտարի մեծ ուշադրություն է դարձվում պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական տեխնիկական պարագաների տեսականու ընդլայնման, որակի բարձրացման վրա, երեխաների ու երիտասարդ հաշմանդամություն ունեցող անձանց համար ձեռք են բերվում եվրոպական արտադրության լսողական սարքեր:

2010 թ. հաշմանդամություն ունեցող անձանց հատկացվել է 17689 պրոթեզաօրթոպեդիկ պարագա, այդ թվում՝ 497 սայլակ, 1287 լսողական սարք /այդ թվում 277 եվրոպական արտադրության/, կատարվել է աչքի պրոթեզավորում ինչպես նաև այլ վերականգնողական պարագաներ: 2011 թվականին շարունակվում են իրականացվել նշված ծրագրով նախատեսված աշխատանքները:

Իրականացվում են հասցեական ծրագրեր՝ ուղղված որոշակի խնդիրներ ունեցող հաշմանդամություն ունեցող անձանց հասարակություն ինտեգրելուն:

Շարունակվում են աչքի պրոթեզավորման և ձայնաստեղծ սարքերով ապահովման ծրագրերը: 2011 թվականին ձայնաստեղծ սարքերով կապահովվեն 100, իսկ աչքի պրոթեզավորում կստանա 90 հաշմանդամություն ունեցող անձ:

Տեսողության խնդիրներ ունեցող անձանց հասարակություն ինտեգրելու, նրանց համար, առանց այլ անձի օգնության, սովորելու և աշխատելու համար պայմաններ ապահովելու նպատակով, 2008 թվականից պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվում է ”Արև” համակարգով համակարգիչների տրամադրման ծրագիրը, որը հաշմանդամություն ունեցող անձ համար նախատեսում է նշված համակարգով համակարգչային ուսուցում և համակարգչային տեխնիկայով ապահովում: Այդ ծրագրում 2011 թվականին ծառայություն կստանա 10 մարդ:

Շարունակվում է տեսողության խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ տառատեսակներով /Բրայլյան/ գրքերի տպագրության, տետրերի պատրաստման, "Խոսող գրքերի" ձայնագրության ծրագիրը: 2011 թ. համար նշված ծրագրի ծախսային ծավալները պահպանվել են:

Հաշմանդամություն ունեցող անձանց բժշկասոցիալական վերականգնումն իրականացվում է "Արթմեդ" բուժվերականգնողական կենտրոնում, "Սթրես-կենտրոն" ՓԲԸ-ում, ինչպես նաև Միջազգային Կարմիր Խաչի հետվնասվածքային վերականգնողական, Գյումրու վերականգնողական, Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական կենտրոններում, "Օշական" մանկական վերականգնողական կենտրոնում, "Արարատ" մոր և մանկան կենտրոններում և այլն:

Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության բնագավառում կարևոր տեղ ու դեր ունի նրանց խնամքի և սոցիալական սպասարկման տրամադրման ծառայությունների համակարգը:

Հաշմանդամություն ունեցող անձանց խնամքը և սոցիալական սպասարկումն իրականացվում է ինչպես շուրջօրյա խնամքի հաստատություններում, այնպես էլ տնային պայմաններում:

Կարևորելով հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ծառայություններ տրամադրող համայնքային ցերեկային կենտրոնների գործունեությունը՝ պետական աջակցություն է ցուցաբերվում "Առաքելություն Հայաստան", "Հույսի կամուրջ" և "Փրկություն" հասարակական կազմակերպություններին:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և շահերի պաշտպանության համար պատասխանատու պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների և այդ ոլորտում գործող հասարակական և այլ կազմակերպությունների համագործակցությունն ապահովելու, իրականացվող աշխատանքները համակարգելու նպատակով, շարունակվել են Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի /այսուհետ՝ Հանձնաժողով/ աշխատանքները:

Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների, դրանց հնարավոր լուծումների և խոչընդոտների վերաբերյալ հանրային իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով, Հանձնաժողովի առաջարկությամբ ստեղծվել է ինտերնետային կայք՝ /www.disabilityarmenia.am/ հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների վերաբերյալ, որը հնարավորություն է տալիս տրամադրել համակարգված, ամբողջական և պարբերաբար թարմացվող տեղեկատվություն հաշմանդամության ոլորտում առկա իրավիճակի և նախատեսվող բարեփոխումների վերաբերյալ, ինչպես նաև ապահովում է հաշմանդամության ոլորտում իրականացվող քաղաքականության և ծրագրերի, առկա խնդիրների, իրավական դաշտի հասանելիությունը բնակչության լայն զանգվածներին:

Ազգային հանձնաժողովի նիստի հաստատման է ներկայացվել Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամության հիմնախնդիրների վերաբերյալ 2010 թվականի ազգային զեկույցը:

2010թ. նեյեմբերի 15-ից դեկտեմբերի 15-ը հանձնաժողովը հայտարարել է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, նրանց խնդիրների իրազեկման միամսյակ, որի ընթացքում կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ: Պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների, ուսանողների հետ հանդիպումների ժամանակ քննարկվել են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, նրանց հասարակություն ինտեգրելու գործընթացի ապահովմանը նպաստող և աջակցող պայմանները: Միամսյակի մեկնարկի ընթացքում Ա. Խաչատրյանի մեծ համաերգասրահում կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված <<Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին>> ՄԱԿ-ի կոնվենցիային նվիրված հանդիսավոր միջոցառում՝ <<Միանանք հանուն հավասար հնարավորությունների>> խորագրով:

Միջոցառման ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների լուծման գործում մեծ ներդրում ունենալու համար ՀՀ Վարչապետի հուշամեդալով պարգևատրվել են մի շարք կազմակերպությունների ղեկավարներ:

Հաշմանդամության հիմնախնդիրների վերաբերյալ հասարակության իրազեկության բարձրացման նպատակով հեռուստատեսությամբ պարբերաբար հարցազրույցներ են տեղի ունեցել ոլորտում պատասխանատու, նախարարության տարբեր աշխատակիցների հետ, ցուցադրվել են հասարակական կազմակերպությունների պատրաստած սոցիալական տեսահոլովակներ:

Նման աշխատանքներն ունեն շարունակական բնույթ:

Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության ոլորտում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը սերտ համագործակցում է այլ նախարարությունների, գերատեսչությունների, հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ:

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Ինչպես անցած տարիներին, այնպես էլ 2012թ. իրականացվելու են հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության ու ներառման և նրանց կյանքի որակի բարելավմանն ուղղված միջոցառումներ:

Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության ոլորտում 2012թ. տարեկան ծրագրով նախատեսվող միջոցառումները բխում են այդ անձանց իրավունքների ու շահերի պաշտպանությունից, նրանց հասարակություն ինտեգրելու, նրանց համար հնարավորինս հավասար պայմաններ ստեղծելու և հավասար հնարավորություններ ապահովելու, նրանց բժշկական, սոցիալական և մասնագիտական վերականգնողական գործընթացն առավելագույնս արդյունավետ իրականացնելու, հաշմանդամություն ունեցող երեխաների ներառական կրթության ու

հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խնդիրների լուծման անհրաժեշտությունից:

Իրականացվելու են աշխատանքներ հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրը կանոնակարգող ազգային օրենսդրությունը ՄԱԿ-ի ”Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին” կոնվենցիայի դրույթներին համապատասխանեցնելու, „Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի /նախագիծը ներկայացված է ՀՀ Կառավարություն/ կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերի մշակման ուղղությամբ:

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովը հետևողական աշխատանքներ է իրականացնելու հաշմանդամ անձանց իրավունքների պաշտպանության ուղղությամբ: Ավելի է ընդլայնվելու համագործակցությունը հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ:

Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանն ու պաշտպանությանն ուղղված 2012 թվականի համար նախատեսված միջոցառումներն իրականացվելու են 10 հիմնական ուղղություններով: